

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԶԵՆԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՅԻ ՄԱՍԻՆ

### ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Գևորգ Ջահուկյանը, անդրադառնալով և ճշգրտելով միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ որոշ բառերի առաջարկված ստուգաբանություններ և կատարելով բառաքննական դիտողություններ, նշում է. «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը»<sup>1</sup>: Միջին գրական հայերենի բառապաշարի բառակազմությունը քննելիս լեզվաբանները հավաստում են. «Միջին գրական լեզուն վկայում է գրաբարին անձանոթ բազմաթիվ պարզ բայեր, որոնց մի մասը նորակազմություն է»<sup>2</sup>: Ասվածն անվերապահորեն վերագրելի է հոմանիշների՝ XII-XVII դդ., այլև նույնանիշների՝ XVIII դ. ավանդված ձևագիր բառարաններին (այսուհետև՝ ՁԲ)<sup>3</sup>, թեև հարկ է արձանագրել, որ, ի տարբերություն հոմանիշների՝ XII-XVII դդ. ավանդվածների, որոնցում առավելապես առկա են նորակազմ պարզ բայեր, ինչպես՝ վշտել, վարսել, առակել, ամօթել, տնագել, շիւարել, XVIII դ. ավանդված՝ նույնանիշների ՁԲ-ում գերակշռում են ածանցավոր և բաղադրյալ կազմություններ: Նշված ՁԲ-ն չունի բնագրային օրինակներ, հետևաբար գրաբարի տպագիր բառարաններում չարձանագրված, այսինքն՝ նորակազմ կամ նորակերտ բայերի գոյությունը փորձ է արվում հաստատելու հայերենի բառակազ-

<sup>1</sup> Գ. Ջահուկյան, Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1976, 12, էջ 41:

<sup>2</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 250:

<sup>3</sup> Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIII դ. ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են հոմանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետևյալ խորագրերով՝ «Նշանաբան նոյնանշան բառից ըստ դաստորութեանց մերոց տառիս» (ՄՄՁ 566, 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթեոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (ՄՄՁ 3110, 75 ա-112ա), «Բառք նոյնանշանք ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթեոսի գերերջանիկ վարդապետէ» (ՄՄՁ 873 և 775, համապատասխանաբար՝ 185ա-220բ և 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաև ՄՄՁ 6762 ձեռագրում գետնոված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ վերջինս և ՄՄՁ 566-ը, որոշ տարբերություններով հանդերձ, նույնն են: Այսուհետև ձեռագրահամարը և էջերը տրվում են շարադրանքում՝ փակագծերի մեջ: Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

մության առանձնահատկություններով, հետագայում լույս տեսած բառարաններով, հնարավորության դեպքում՝ նաև բնագրային օրինակներով<sup>4</sup>, այլև պարզելու և պարզաբանելու բառիմաստային զարգացումները և փոփոխությունները:

Խոսքը վերաբերում է առակցել, առբասրել, հակազինել, հակամարտել, մանրախուզել, նեղարկել, պայմանաւորել, սակարկել, տրտմակցել բայերին: Առանձնացված բայերից առակցել-ը և առբասրել-ը նախածանցավոր են:

2. Աճառյանը, անդրադառնալով առ նախդրին, նշում է, որ այն «շատ սովորական է բառակերտութեան մէջ, ուր դրում է բառակցում կամ մի նախդիրից յետոյ...»՝ հավելելով «Յունաբան հեղինակների մօտ դարձել է յն. πρός ձևին համապատասխան նախամասնիկ, որով կազմուած են բազմաթիւ բառեր», հիշատակելով նաև առբերել, առդնել բայերը<sup>5</sup>: Այդպիսին կարելի է դիտարկել նաև Կցել հենարանով նույնանիշային շարքում (այսուհետև՝ ՆՇ) ընդգրկված, առ-ով և կից արմատից կազմված կցել-ով<sup>6</sup> բաղադրված **առակցել** բայը (ՄՄՁ 6762, 113ա-113բ. 566 (I), 254ա): Այն, ըստ «Գրահավաք» կայքի որոնումների տվյալների, մի քանի անգամ վկայված է Հ. Վիլլոտի՝ 1714 թ. հրատարակված լատիներեն-հայերեն նոր բառարանում. «կապել. բնեռել. պընդել», «կցել. միաւորել. յօդել. յարել», «առադրել» բայերի շարքում հիշատակվում են նաև առակցել-ը և առկցել-ը<sup>7</sup>: Բայը գործածում է նաև Խ. Էրզրումեցին՝ 1736 թ. հրատարակված «Կարճառօտագունեղ համառօտութիւն...» երկում՝ «Վասն այսորիկ պիտոյ է աղօթել, և աղօթից գործութիւն առակցել» նախադասության մեջ<sup>8</sup>: Մի. Սեբաստացին վկայում է առակցել-ը «տէ՛ս ... Յօդել»<sup>9</sup> հղումով:

Առկցելալ բառը նշում է Ս. Գաբամաճյանը՝ «բանի մը կցուած. աւելցած» բացատրությամբ և աստղանիշով՝ հավաստելով, որ «բառերու առջև դրուած աստղանիշ կը ցուցնէ նոյն բառերուն նոր շինուած ըլլալը»<sup>10</sup>: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ «Կցել, իրար հետ կապակցել» նշանակությամբ առկցել-ը «հագուադէպ բառ»<sup>11</sup> է, թէև նույն նշանակությամբ

<sup>4</sup> Դրանք քաղելու հնարավորություն է ընձեռում «Գրահավաք» կայքի «Հայերեն բնագրերի առցանց շտեմարանում» հայերեն բառերի որոնման դաշտը:

<sup>5</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Եր., 1971, էջ 247:

<sup>6</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 2, Եր., 1973, էջ 595:

<sup>7</sup> Տե՛ս J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, Roma, 1714, էջք 33, 69, 679:

<sup>8</sup> Տե՛ս «ԿԱՐՃԱՌՕՏԱԳՈՒՆԵՂ, ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ Ընդհանրականի Աստուածաբանութեան Խոկականի, ուսումնականի, դրականի, բարոյականի, և այլ: Ստորասականա Խօսակցութեամբ: Շարադրեցեալ ի լատինականի լեզուջ ի գերապատուելոյ Խաչատրոյ Երզրումեցոյ Աստուածաբան Վարդապետէ», Վենետիկ, 1736, էջ 283:

<sup>9</sup> Միլիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ԲՀԼ), հ. 2, Վենետիկ, 1769, էջ 56:

<sup>10</sup> Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերեն լեզուի (այսուհետև՝ ԳՆԲՀԼ), Կ. Պոլիս, 1910, էջք 169 և Ը:

<sup>11</sup> Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ.

այն արձանագրում են արդի հայերենի բացատրական և հոմանիշների բառարանները<sup>12</sup>:

Առ-ով և «պարսավելի, անարգելի» նշանակությամբ բասիր արմատից (ՀԱԲ, հ. 1, էջ 415) կազմված բասրել-ով բաղադրված **առբասրել** \* -ը առկա է Ջատագովել հենաբառով ՆՇ-ում՝ «(եթե հարմար իցե բանին. դիր ևս)» պարզաբանումից և «արդարացուցանել զբան նոցա կամ զնա. անմեղադրելի ցուցանել զբան նոցա կամ զնա» բացատրություններից հետո (ՄՄՁ 6762, 123բ. 566 (I), 269ա):

Բայը, ըստ բառարանների, նաև «Գրահավաք» կայքի որոնումների տվյալներով, առաջին անգամ «արդարացնել» նշանակությամբ վկայում է Յ. Շրյոդերը՝ «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ առբասրել-ը (excusare) բացատրելիս նշելով անմեղադիր լինել հարադրությունը<sup>13</sup>:

Ավելի քան կես դար հետո Միս. Մեբաստացին առբասրեմ բառահոդվածում արձանագրում է. «... նոյն է ընդ բային բասրել. որ է պարսաւել կամ մեղադրել և այլն. քանզի մասնիկն առ ո՛չ է բացբարձական. այլ ստորասական և թարմատար: որպէս յայտ է ի բայէն առլնուլ. որ է լնուլ. բայց ոմանք ի նորոց շրջեալ զսա ի ներհակն, ի գործածեն փոխանակ արտաբասրելոյ. որ է անմեղադիր առնել կամ ջատագովել» (ԲՀԼ, հ.2, էջ 59): Աբբահոր՝ 1739 թ. հեղինակած «Մեկնութիւն գրոց Ժողովողին» երկասիրության՝ «Եւ որքան առ այսպիսի իմաստութիւն, ոչ ոք որքան և իցե բթամիտ (միայն թէ չիցե իւելագար) կարէ առբասրել զինքն...» նախադասության մեջ գործածված առբասրել-ն անվերապահորեն ունի «պարսաւել կամ մեղադրել»<sup>14</sup> իմաստը:

Միս. Մեբաստացու՝ առբասրել-ը «արդարացնել» նշանակությամբ գործածելու մասին դիտարկումը թերևս կարելի է վերագրել և հավանական համարել Ղ. Ալիշանի հեղինակած տարեգրքում առկա «... և ի մէջ այլոց բանից՝ ասէ. Վանքս աղքատ է, և սակաւ եղբարք բնակեմք, ոչ ունենալով զդիպաւորութիւն, և ոչ զանկողինս բաւական: Իբր կամեր այսու առբասրել զինքն, եթէ ոչ պաշտպանիցեր ինձ...»<sup>15</sup> նախադասության դեպքում:

Ըստ Մտ. Մալխասյանցի՝ առբասրել-ը «Բասրել, պարսաւել, մեղադրել» նշանակությամբ «հագուաղէպ բառ» է (ՄՀԲԲ, հ. 1, էջ 226). այն նույն նշումով և միևնույն նշանակությամբ է արձանագրում նաև ՀԼՀԲ-ն

1, Եր., 1944, էջ 229:

<sup>12</sup> Տե՛ս նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Եր., 1969, էջ 180: **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Եր., 1976, էջ 107: **Ա. Մուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ), Եր., 1967, էջ 82:

\* ՄՄՁ 6762-ում առ բասրել տարբերակն է:

<sup>13</sup> Տե՛ս նաև **Յ. Շրյոդեր**, Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711, էջ 387:

<sup>14</sup> «Մեկնութիւն գրոց Ժողովողին Արարեցեալ և շարադրեցեալ ի Մխիթարայ Վարդապետէ Մեբաստացոյ», Վենետիկ, 1736, էջ 299:

<sup>15</sup> **Ղ. Ալիշան**, Գամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հաւաստըջեայ հաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 155:

(ՀԼՀԲ, էջ 114):

Ի տարբերություն առկցել-ի՝ առբասրել-ը՝ «պարսաւել» նշանակությամբ և (հնց.) նշումով, արձանագրված է միայն Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանում»<sup>16</sup>:

Հակառակել. կամ հակառակ կալ. ընդդիմանալ. կամ ընդդէմ կալ. ընդդիմամարտել ՆՇ-ում առկա (ՄՄՁ 566 (I), 254բ. 6762, 113բ) **հակազինել** և **հակամարտել** բայերը բաղադրված են ըստ Հ. Աճառյանի «յետոսկեդարեան հայերէնի մէջ» շատ գործածական «յն. άντι- ձևին» համապատասխան հակ նախամասնիկով: Հ. Աճառյանը «նոր գրականում կազմուած բազմաթիւ բառեր»-ի շարքում արձանագրում է նաև հակամարտութիւն-ը<sup>17</sup>: Հակազինել-ը վկայում են Հ. Վիլլոտը, Միս. Սեբաստացին. առաջինը նաև այդպես է բացատրում լատիներեն *defendo*-ն<sup>18</sup>, երկրորդը՝ գործածում «Բայց եթէ ընդդէմ վճռոյ քահանայապետին, և ծերոց հակազինեալ առնիցէին զամբոյս ոչ լիէին պատժապարտք...» նախադասության մեջ<sup>19</sup>: Է. Աղայանը նշում է միայն հակազենք բառը «հակամարտելու՝ դիմադրելու զենք» բացատրությամբ (ԱՀԲԲ, էջ 792):

Հ. Վիլլոտը նույն բառահոդվածում վկայում է նաև հակամարտել-ը<sup>20</sup>: Միս. Սեբաստացին «հակառակ ումեք մարտնչիլ. կամ հակազինիլ. կամ ընդդիմանալ. և կամ հակառակիլ թէ մարտիւ իցէ, թէ բանիւ, և թէ զանիւ»<sup>21</sup> իմաստներով բայը նաև հիշատակում է գրաբարի քերականությանը նվիրված աշխատության մեջ<sup>22</sup>: Հետագայում հակամարտել-ը վկայում են Ստ. Մալխասյանցը (հղվում է ընդդիմամարտել-ին)<sup>23</sup>, Է. Աղայանը՝ «հակադրվել, ընդդիմամարտել. մի բանի դէմ կռվել. փխդրձ. իրար դէմ կռվել՝ պայքարել» նշանակություններով (ԱՀԲԲ, էջ 793), ԺՀԼԲԲ-ն՝ «(հզվդ.)»<sup>24</sup> նշումով, այլև արևմտահայերենի բառարանները<sup>25</sup>:

XII-XIII դդ. ավանդված ՄՄՁ 5596-ում՝ Հայցել \* հենաբառով հոմա-

<sup>16</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., 1973, էջ 113:

<sup>17</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 3, Եր., 1977, էջ 11-12:

<sup>18</sup> Տե՛ս J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, էջ 199:

<sup>19</sup> Տե՛ս «Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի, արարեալ և շարադրեալ ի Միս. Սեբաստացոյ», Վենետիկ, 1737, էջ 812:

<sup>20</sup> Տե՛ս J. Villotte, նշվ. աշխ.:

<sup>21</sup> ԲՀԼ, հ. 1, Վենետիկ, 1749, էջ 493:

<sup>22</sup> Տե՛ս «Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազան սեռի Շարադրեցեալ աշխատավիրութեամբ Միս. Սեբաստացոյ», Վենետիկ, 1730, էջ 547:

<sup>23</sup> Տե՛ս ՄՀԲԲ, հ. 3, Եր., 1944, էջ 14:

<sup>24</sup> ԺՀԼԲԲ, հ. 3, Եր., 1974, էջ 259:

<sup>25</sup> Տե՛ս Գ. Ճերեճեան, Փ. Վ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Պէյրուս, 1992, էջ 1097: Ա. Կոստեան, Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրուս, 1998, էջ 229: Ռ. Մաքաչետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Եր., 2011, էջ 173:

\* Ուշագրավ է Նոր հայկազան բառգրքի նշումը Հայցել բառահոդվածի վերջում. «Ի Հին բռ. որպէս փաղանուն դնին, \*Հայցել, այցել, զննել, յուզել, խնդրել» (Գ. Աւետիքեան, Խ. Միրսէլեան, Մ. Աւզերեան, Նոր բառգիրք հայկազան լեզուի (այսուհետև

նիշային շարքում (այսուհետև՝ ՆՇ) հանդիպում է **մանրախուզել** բայը (220ա): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են մանր և խոյզ արմատներով բաղադրված մանրախոյզ-ը՝ «մանր խուզող, պրպտող»<sup>26</sup> իմաստով: Մանրախուզել-ը վկայում է Մի. Սեբաստացին՝ «մանրամասն խուզել. կամ հետազոտ քննութեամբ որոնել» նշանակությամբ (ԲՀԼ, հ. 1, էջ 615): Մանրախուզել բայը գործածում է Վարդան վարդապետը «Հաւաքումն պատմութեան» գրքի առաջաբանում՝ նշելով՝ «...կամ առ ծերութեան հասակին ոչ բաւեալ մանրախուզել ի ստոյգ պատմչաց...»<sup>27</sup>:

ՆՀԲ-ն նրբաբայել բայի՝ «Նուրբ բայիւք այսինքն բառիւք և բանիւք խօսել, յուզել» իմաստը բացատրելիս հիշատակում է նաև մանրախուզել -ը (ՆՀԲ, հ. 2, էջ 455): Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ Մխիթարյան միաբանության հայրերը կիրառել են բայը: Այն իբրև գլխաբառ վկայում են Մ. Ջախջախյանը՝ «մանր խուզիլ կամ որոնիլ»<sup>28</sup> բացատրությամբ, և Ստ. Մալխասյանը՝ «հազուադէպ բառ» նշումով և «Մանրամասնօրէն՝ մանրագնին կերպով խուզարկել, հետազօտել, քննել» նշանակությամբ (ՄՀԲԲ, հ. 3, էջ 256):

Արդի հայերենի բացատրական բառարաններում մանրախուզել-ը չկա, բայց առկա են մանրախույզ, մանրախուզորեն, մանրախուզություն բառերը:

Միայն ՄՄՁ 566 (II)-ում (298ա)՝ Ցասնուլ. զայրանալ. վրդովել. խռովիլ. աղմկիլ. բարկանալ. նեղասրտիլ ՆՇ-ում է հանդիպում նեղ (ՀԱԲ, հ. 3, էջ 439) և Հ. Աճառյանի հավաստմամբ՝ «ձգել» իմաստներով «հների մէջ .... առանձին անգործածական» արկ (ՀԱԲ, հ. 1, էջ 320) արմատներով բաղադրված **նեղարկել** բայը, որն ամենայն հավանականությամբ «նեղը գցել, նեղել» նշանակությամբ ի նեղ արկանել դարձվածային միավորի (ՆՀԲ, հ. 2, էջ 410)<sup>29</sup> համադրական կազմությունն է. այն հիշեցնում է 2002 թ. Ս. Էլոյանի հրատարակած «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում» արձանագրված և վերջերս լայնորեն կիրառվող չեղարկել-ը<sup>30</sup>:

ՄՄՁ 6762-ում՝ Ուխտել հենաբառով ՆՇ-ում, «(եթէ ընդ մարդկան իցէ և պիտոյ իցէ դնի ևս) դաշինս կոնել. զպայման դնել» բացատրությունից հետո պայմանել բայի փոխարեն առկա է **պայմանաւորել**-ը (120բ): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են պայմանաւոր-ը՝ «որ

ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 35):

<sup>26</sup> ՆՀԲ, հ. 2, էջ 455: Մ. Աւգերեան, Գ. Ճէլալեան, Առձեռն բառգիրք հայկազնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), 1865, Վենետիկ, էջ 540:

<sup>27</sup> «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ Է:

<sup>28</sup> Մ. Ջախջախեան, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 947:

<sup>29</sup> Տե՛ս նաև Ռ. Ղազարեան, Գրաբարի դարձուածաբանական բառարան (այսուհետև՝ ԳԴԲ), Եր., 2012, էջ 130:

<sup>30</sup> Տե՛ս Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002, էջ 386:

ինչ ունի գայաման. ուխտական. վճռական...» (ՆՀԲ, հ. 2, էջ 595. ԱԲ, էջ 678): Հ.Աճառյանը «նոր բառեր»-ի շարքում հիշատակում է պայմանաւորուիլ բայը<sup>31</sup>: Պայմանաւորել-ը Ստ. Մալխասյանցի բառարանում առկա է «1. Որնէ պայմանով սահմանափակել, խոստանալ կամ համաձայնել որոշ պայմանով...»<sup>32</sup> նշանակությամբ: Նույն նշանակությունն է արձանագրում Է. Աղայանը (տե՛ս ԱՀԲԲ, էջ 1177), մինչ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» «(հզվդ.)» նշումով վկայում է միայն «այս կամ այն պայմանով սահմանել, նախապայման հանդիսանալ»-ը՝ «համաձայնության գալ, համաձայնվել»-ը նշելով պայմանավորվել բայի համար<sup>33</sup>: Հետևաբար թերևս կարելի է ընդունելի կամ հավանական համարել, որ XVIII դ. ավանդված ձևագիր բառարանում պայմանաւորել բայը նույն նշանակությունն ունի, ինչ «նոր բառեր»-ի շարքում Հ. Աճառյանի հիշատակած պայմանաւորուիլ-ը:

Ինչ վերաբերում է նույն ՆՇ-ում «(եթէ ի յառ և ի տուր)» բացատրությունից հետո առկա **սակարկել**-ին, ապա «պայման, սահմանուած չափ... կարգ, դաշն, օրէնք» նշանակող սակ (ՀԱԲ, հ. 4, էջ 157) և արկ արմատներով բաղադրված սակարկել բայի՝ «սակարկութիւն ընել» նշանակությամբ «նոր շինուած ըլլալը»-ն է արձանագրում Ս. Գաբամաճյանը (ԳՆԲՀԼ, էջ 174): Հ. Աճառյանը նույնպես այն դիտում է «նոր բառ» (ՀԱԲ, հ. 4, էջ 157):

Նոր հայկազյան բառգիրքը սակ արկանել-ի համար նշում է միայն «դաշնաւորիլ» իմաստը (ՆՀԲ, հ. 2, էջ 684)՝ վերջինս բացատրելով որպէս «Դաշամբք հաստատել. ուխտել. դաշինս կռել. դաշնաւոր լինել. հաշտիլ. միաբանիլ. խոսք դնել կամ տալ» (ՆՀԲ, հ. 1, էջ 595), իսկ Առձեռն բառարանը՝ «զին կտրել, դաշ դնել» (ԱԲ, էջ 710). այս իմաստը՝ «Սակարկել, զին կտրել՝ նշանակել», նշում է նաև ԳԴԲ-ն (ԳԴԲ, էջ 250): Գ. Փեշտրմալճյանը սակ արկանել-ը հղում է «դաշնաւորիլ ընդ ումեք վասն գնոց իրիք պայմանել զվարձս» նշանակությամբ սակարկանեմ-ին<sup>34</sup>: Հետևաբար կարելի է նշել, որ թեև XVIII դ. ավանդված ՁԲ-ում «(եթէ ի յառ և ի տուր)» բացատրությամբ առկա է սակարկել բայը, սակայն ըստ բառարանային տվյալների՝ XIX դ. դեռևս կիրառվել է սակարկանեմ-ը: Ստ. Մալխասյանցը և արդի հայերենի բացատրական բառարանները սակարկել-ի համար առաջնային են դիտում «ապրանքի կամ աշխատանքի գնի մասին խօսել իրար հետ՝ համաձայնութեան գալու նպատակով» իմաստը (ՄՀԲԲ, հ. 4, էջ 171. ԱՀԲԲ, էջ 1269. ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 262)<sup>35</sup>:

<sup>31</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, Եր., 1979, էջ 18:

<sup>32</sup> ՄՀԲԲ, հ. 4, Եր., 1945, էջ 46:

<sup>33</sup> Տե՛ս ԺՀԼԲԲ, հ. 4, Եր., 1980, էջ 157:

<sup>34</sup> Գ. Փեշտրմալճեան, Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Կ. Պոլիս, 1846, էջ 620-621:

<sup>35</sup> Տե՛ս նաև Գ. Ճերեճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 769: Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէրոյթ, 1968, էջ 745: Պ. Ճիզմեճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, Հալէպ, 1954, էջ 1258: Ա. Կոստեան, նշվ. աշխ., էջ 403:

Լալ հենարառով ՆՇ-ում (ՄՄՁ 566 (I), 247բ. 6762, 109բ) առկա է **տրտմակցել** բայը, որ ներառված է շարքին հավելված (եթե ընդ այլոց դնի) արտասուակցորդ լինել. ողբակցել. ցուակից լինել հատվածում:

Ըստ Հ. Աճառյանի՝ բնիկ հայերեն տրտում «տխուր, վշտալի» (ՀԱԲ, հ. 4, էջ 440) և ըստ Գ. Ջահուկյանի՝ «թերևս բնիկ հնդեվրոպական \*geit-so- կամ \*geit-sk-» կից «մոտ, կպած, միասին»<sup>36</sup> արմատներով բաղադրված, «միասին տրտմել» նշանակությամբ բայը վկայում են միայն Ստ. Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. 4, էջ 449) և արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 1462. ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 536)<sup>37</sup>:

Այսպիսով, քննությամբ պարզվում է, որ XVIII դ. ավանդված ձեռագիր բառարաններում առկա, բայց գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բայերը կամ ստեղծել են ընդօրինակող գրիչները, կամ էլ նրանք բառաշարքերին հավելել են բայեր, որոնք գործածել են ժամանակիցները. մի քանի բայ հիշատակում է Միս. Սեբաստացին XVIII դ. լույս տեսած բառարանում: Մի քանիսն էլ, ըստ բառարանային տվյալների, պահպանվել են հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում:

**Բանալի բառեր** – *ձեռագիր բառարան, հոմանիշ, բայ, նորակազմ, արմատ, արդի հայերենի բառարաններ*

**НАЗИК ОГАНЕСЯН – Наблюдения над рядом глаголов в рукописных словарях.** – Рассматривая и уточняя этимологию некоторых «недавно найденных» в средневековых словарях слов, акад. Геворг Джаукян отмечал, что лексикографические памятники средневековья дают неоценимый материал для истории армянского языка и этимологии. Сказанное полностью относится к рукописным словарям синонимов XII-XVIII вв. В этих манускриптах нет текстовых примеров, поэтому предпринимается попытка установить отдельные глаголы путём словообразования, по позднейшим словарям и, по мере возможности, примерам из литературных памятников.

По ходу исследования выясняется, что переписчики создавали глаголы на основе тех, которые встречались у современников; иные из них засвидетельствованы в словаре Мхитара Себасти (XVIII век) и по словарным данным сохранены как в западно-, так и восточноармянском вариантах.

**Ключевые слова:** *рукописный словарь, синоним, глагол, новосозданный, корень, словаря армянского языка*

**NAZIK HOVHANNISYAN – Observations on Some Verbs (Based on the Material of Manuscript Dictionaries).** – Gevorg Jahukyan, reviewing and refining the proposed etymologies of some "recently found" words, testified in medieval dictionaries, notes that the study of lexicographic monuments of medieval Armenia provides important material for the history of the Armenian language and etymology.

<sup>36</sup> Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 407:

<sup>37</sup> Տե՛ս նաև Գ. Ճերեճեան, Փ. Կ. Տոնիկեան, Ա. Տեր Խաչատուրեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 989: Ա. Տեր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տոնիկեան, նշվ. աշխ., էջ 846: Ռ. Սարապետոյեան, նշվ. աշխ., էջ 351:

This can be unconditionally attributed to manuscript dictionaries of synonyms of XII-XVIII centuries. There are no textual examples in these dictionaries, therefore an attempt is made to confirm the existence of verbs by structures of the Armenian language formation, dictionaries published later, and, to the extent possible, textual examples.

The verbs առակցել "to join", առբասրել "to blame", հակազինել "to oppose", հակամարտել "id.", մանրախուզել "to explore in detail", նեղարկել "to trouble", պայմանաւորել "to agree", սակարկել "to agree on a price", տրտակցել "to sorrow" are considered.

Considering the aforementioned verbs, it turns out that the scribes created or added verbs that were used by contemporaries: some of these verbs are testified in the dictionary of Mkh. Sebastatsi (XVIII century) and according to dictionary data they are preserved in Eastern and Western Armenian variants of the Armenian language.

**Key words:** *manuscript dictionary, synonym, verb, newly created, root, dictionaries of the Armenian language*

Ներկայացվել է՝ 25.02.2019

Գրախոսվել է՝ 15.03.2019

Ընդունվել է տպագրության՝ 19.07.2019